

Հաղորդագրություն

2023 թվականի ապրիլի 7-ին կայանալիք Դատավորների ընդհանուր ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների թափուր տեղերի ընտրության վերաբերյալ

2023 թվականի ապրիլի 7-ին հրավիրված Դատավորների ընդհանուր ժողովին Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրությունը կազմակերպելու նպատակով Դատական դեպարտամենտի ղեկավարի լիազորությունները կատարողը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 76-րդ հոդվածի 5-րդ մասով, 2023 թվականի մարտի 10-ին ծանուցագրեր է ուղարկել Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուի համար Սահմանադրության 174-րդ հոդվածի 2-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 76-րդ հոդվածի 1-4-րդ մասերով ու 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները բավարարող՝ Սնանկության դատարանի 11 և Վերաքննիչ քրեական դատարանի 11 դատավորի:

Սնանկության դատարանից ստացվել են Խորհրդի դատավոր անդամի թեկնածուների 10 դիմում՝ իրենց անունները քվեաթերթիկում չներառելու մասին, ինչպես նաև՝ Սնանկության դատարանի քվեաթերթիկում ներառված դատավորի՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը:

Վերաքննիչ քրեական դատարանից ստացվել են Խորհրդի դատավոր անդամի թեկնածուների 9 դիմում՝ իրենց անունները քվեաթերթիկում չներառելու մասին, ինչպես նաև՝ Վերաքննիչ քրեական դատարանի քվեաթերթիկում ներառված դատավորների՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը:

Այսպիսով, 2023 թվականի ապրիլի 7-ին հրավիրված Դատավորների ընդհանուր ժողովին Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղերի ընտրության՝ Սնանկության դատարանի քվեաթերթիկում ներառվել է մեկ թեկնածու, իսկ Վերաքննիչ քրեական դատարանի քվեաթերթիկում՝ երկու թեկնածու:

**Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի ընտրություն
Սնանկության դատարանից.**

Հ/հ	Դատավորի Անունը, ազգանունը, դատարանի անվանումը
1.	Արթուր Աթաբեկյան (ՀՀ սնանկության դատարան)

**Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի ընտրություն
Վերաքննիչ քրեական դատարանից.**

Հ/հ	Դատավորի Անունը, ազգանունը, դատարանի անվանումը
1.	Արշակ Վարդանյան (ՀՀ վերաքննիչ քրեական դատարան)
2.	Ռուբիկ Մխիթարյան (ՀՀ վերաքննիչ քրեական դատարան)

Դատական դեպարտամենտ